




1865
ՅԵՄԱՅԱՆ



Տ Ե Օ Ր Է Ն

Գ. ՄԵՃԱՅԱՆԻՐԵԱՆ


Երկրագործի մասնա գրեւը
սղոթաւն ուղարկել ըսել է:

Ժ. ԳԻԼԺՕ



Fondée sous le Patronage
de Mr. E. DUCLAUX

Directeur K. MEDZADOURIAN 53, rue Boulard, PARIS.



Գ Ո Ւ Թ Ա Ն

Հ Ա Ն Դ Է Ս

Հոդագործական Դիւսական, Արուեստական

Ե Տարի

Յունուար

1905

ԳԻՒՂԵՐՈՒ ԴԱՏԱՐԿՈՒԻԼԸ

ԵՒ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ, ՈՒՍՄՈՒՒՔԸ

Այս միջոցին Ֆրանսան, ինչպէս եւրոպական բոլոր ազգերը, անտեսական ճգնաժամի մը մէջ են, որ մեծ թնդիւն կը հանէ գիւղերու մէջ: «Մեռնող հողի ոլբերգական խնդիրը բոլորը կը տխրեցնէ եւ կը սարսափեցնէ»:

«Հանօթօ կ'ըսէ. «Դաշտերու մշակը կը գաղթէ, անոր մեկնումը կը գատարկէ գիւղերը, քաղաքներու մէջ գէպ ի գործարան դնացող մարդկային մարմնի բաժինը կը շատցունէ, որ արագօրէն կը ջախջախուի չափազանց աշխատութենէ եւ արդի հաճոյքներէ»: Ամէն տեղերէ վրդօվմունքի ազդեակներ կը բարձրանան. պոռալ կանչելը բռնի մը չեն ծառայեր, պէտք է գործել եւ այս ներկայ գրութեան դէմ կարճօրէն կոուիլ»:

Ի՞նչ ըրին եւ ի՞նչ կ'ուզեն ընել: Խօսքը Գ. Հանօթօինն է. «Եթէրը երեսի վրայ կը թողուի, վասնզի մեր գիւղացին այս անտեսական տագնապին դիմագրելու համար ղինուած չէ, վասն զի մենք չփորձեցինք, վարժարանի միջոցով դաշտք մարդուն սրտին մէջ պահել ծննդավայրի սէրը, չի փորձեցին ի այդ խանդը ձեւափոխելով արծարծել, որը եղած էր մեր հին Ֆրանսայի հողի բեղունութիւնն ու ճոխութիւնը. եւ սակայն հողը մեր հարստութեան առաջին ազբիւրն է, եւ դրեթ է

հինցած խօսք մը պիտի ըլլայ ըսել թէ՛ հողը լքանող ազգերը կընթանան զեպ ի սեռնկու թիւն , զեպ ի թշուառութիւն . զէպ ի արագ անկումն : »

Լամպէրի ակազմմբի համարտարանապետ Պ. Բայրիկ՝ ըսէ՛ « Պէտք է մեր վարժարաններուն մէջ դաս տայ թէ՛ երկրի աշխատութիւնը հողատիրոջ համար տնօրինութեան խելացի աշխատութիւն մ'է , թէ՛ երկրագործութիւնը այսօր առատ դիւրակեցութեան մը հասնելու լաւագոյն միջոցն է . եթէ հողատէրերը աւելի բազմաթիւ ըլլային՝ յարաբերութիւնները ուրիշ կերպով հաճելի եւ աւելի ազատ պիտի ըլլային եւ աւելի ուրախ ու զուարթ լան՝ քաղաքային յարաբերութիւնները . պէտք է որ ազատ մեծ հանդարտութեան եւ բնութեան վեհ տեսարաններու համը առնել սորվին , մաքուր օդ ծծելու պէտքը հասկնան , ազատ օրէն տեսնեն երթինքը , եւ զգան թէ՛ երկրագործի կեանքը ինչքան շահեկանութիւններ , անակնկալներ կը պարուճակէ , ինչքան պատուոյ ջգագացումը կ'ուժովցնէ , ինչքան կը նպաստէ գեղեցկի զբացման մշակութեան , ինչքան բեզուն է , ճշմարիտ գիտակցութեամբ իր շուրջը բարեգործութիւններ տարածելու , եւ ո՞րքան ուժով մտաւորական մշակութեամբ լեցուն են իր յարմար հանգստեան ժամերը :

« Երկրագործ ժողովուրդի մէջ ապրող ուսուցիչները պարտին բոլոր ուժով կողմի վզտիկ քաղքենիներու տուած փոխանցող օրինակին զէմ , որոնք պաշտօններ ձեռք բերելու համար կը քծնին : Քաղաքային կեանքի պատկերին գիւղական կեանքի պատկերը հեկադրելէ պէտք չէ վախնան . պէտք է նկարագրին մէկ կողմէ , աղմկալից եւ նեղ փողոցներու կեանքը , իրարու վրայ զիզուած անօդաւէտ եւ յաճախ արեւ շտեմնող բնակարանները , ժանաջնող ճարտարագործութիւնը , չափազանց բաժնուած , ապշեցնող եւ միօրինակ աշխատութիւնը , ծառայութիւնը իր անորոշ գրութեամբ եւ տէրերու ամտանկի քմահաճոյքներու գերութիւնը . . .

« Պէտք է նկարագրեն միւս կողմէ , պիւզի գործօն եւ կոշտ կեանքը : որ կը սահի բացօդեայ , բնութեան մեծ

հանդարտութեանը, ծնողներու, աղջակներու յու եւ ազա-
յութեան բարեկամներու զրկին մէջ :»

« Եւր վարժարանները պէտք է վերստին ձեռք բանեն
Սիւլլիի ճշմարտապէս ազգային եւ իսկապէս հեռատես
աւանդութիւնք. հայրենիքի ազատան, իր հարտութիւնը,
ամէն բանէ առաջ կախում ունի երկրապարծութենէն եւ
մշակական եղանակներու եւ կենդանարանութեան մէջ
ներմուծուած ամենայնեօթն եւ ամենափոքրիկ կատարելա-
գործումը՝ երկրին, համար կարեւոր մթնոններու շահով կը
հաշուուի :»

Պ. Կիւէս կ'ուզէ զիւղային հախնական վարժարանները
բարեկարգել եւ առաջնորդել աշակերտները զէպի իրական
եւ իսկապէս իրականութիւնները. բոտ իրեն՝ ծրագրիները ոչ
մէկ կիւղոջ գիւղական կեանքի փայլքը չեն կրեր եւ
իրականութեան հետ սերտ յարաբերութեան մէջ չեն որուն
մէջ կազրի զիւղային :»

Պ. Է. Լ. Դ. կ'ուզէ հոմանապէս բարեկամել զիւղական
վարժարանը «Շատ անգամ կ'ըսէ, ո'չ սղան, ո'չ ալ ծնողքը,
զպրոցի հասարաններուն վրայ աւանդուած ծանօթութեանց
կիրարկումը չեն սեաներ օրական կեանքի պատրանքներուն
մէջ :»

Ժ. եւ Պ. Կ'ըսեն.

« Բոլոր անոնք, որ ջերմօրէն մըսնասական երկրի բար-
գաւածումը կ'ուզեն, թող սիրեն զիւղերու բնակիչները
իրենց զիմացկունութեան եւ սակաւապէտութեան համար.
Թող ճանչնան անոր պէտքերը. թող պահաջեն անոնց վար-
ժարաններու ուսմանց ծրագրին փոփոխութիւն եւ ուղղու-
թիւն :»

« Դագրիցները զիւղական զպրոցներու քաղաքային
վարժարաններու ծրագրի պարտաւորիչ ընելը. մտածենք
զաշտերու համար լաւ երկրապարծներու սերունդներ պատ-
րաստել :»

« Վարժարանը աւելի գործնական, աւելի մասնագիտա-
կան եւ կեանքի պայմաններուն լաւ յարմարացուցած ըլլալով՝
ո'չ կիյնայ, ո'չ ալ մարդիք կազմելու հաւակնութիւնը կը
կորսնցնէ :»

ինչպէս կը տեսնուի, ամէն կողմէ, նախնական վարժարաններէ, աւելի շատ երկրագործներ կը պահանջուի եւ երկրագործական կեանքի աւելի որոշ պատրաստութիւն մը:

Վարժարանը, ամէն բանէ առաջ, տղուն մէջ պէտք է կազմէ մարդ մը, այսինքն խիղճ մը, կամք մը եւ քաղաքացի մը, այսինքն թէ քաղաքացիական պարտիքը եւ իրաւունքները ճանչցող ազատ եւ լուսաւորեալ անհատ մը. պէտք չէ ուրանալ արգարիւ, որ վարժարանի առաջին եւ լաւագոյն գործը ու պատրաստելիք մարդու բարոյականի պահապանն է, զինքն ապագային ապրիցնող արուեստի ճաշակն ու սէրը:

Դիւզական վարժարաններու զերը սահմանելու նպատակով 1897 յունուար 4ին արձակուած է հետեւեալ շրջաբերականը.

« Նախակրթական վարժարաններու ծրագիրը, որ կրնայ թոյլատրել երկրագործական ծանօթութիւններու ուսուցումը, պարտի ուղղուիլ աւելի տղու խելքին քան անոր յիշողութեանը, պէտք է յենու երկրագործական իրական կեանքի անցքերուն եւ պարզ փորձերու վրայ, որ վարժարանի տրամադրած նիւթական ազբւրները կրնան թոյլատրել, ցոյց տալու համար ամենակարեւոր մշակական հիմնական գործողութեանց սկզբունքները: Դիւզական վարժարանին մէջ ինչ որ մանաւանդ պէտք է սովորեցնել, այս գործողութեանց ի՞նչու համարն է անոր ընկերացող երեւոյթներու բացատրութեան հետ եւ ո՞չ թէ գործողութեանց կերպերու մանրամասնութիւնները, մէկզի թողլով իրկրագործական զիտութեանց կանոններու, սահմաններու: Եւ օրէնքներու ուսուցումը: »

« Վարժարանը պէտք է սահմանափակուի պատրաստելու խելացի արհեստավարժութեան՝ այն արուեստին, որ զայն պիտի ապրեցնէ եւ պիտի տայ անոր իր ապագայ զբաղման ճաշակը: »

Մեծ գիտնական Պ. Պերթլլօի հեղինակաւոր դադափարն է « Դասական ուսումը, երբեմնի պէս, արդի ընկերութեան կարիքներուն եւ գործնական պէտքերուն հետ ներգաշնակութեան մէջ չէ, այս ընկերութեան ասպարէզներուն եւ

դործերուն բաւականաչափ չի պատրաստեր :

« Մարդոց մեծագոյն մասը այսօր կ'ուզէ՝ ձեռք բերել աւելի յարմար կրթութիւն մը արդի գործնական կեանքին սահմանուած :

Ինչպէս Պ. Պերթըլօ գիտել կուտայ, պատանին երկրորդական վարժարանին գրասեղանները թողլէ ետքը, պէտք է կեանքի կոուրն մէջ մտնէ՝ ծանօթութեանց պաշարով մը, որպէս զի իսկոյն կարող ըլլայ իր ճամբան հարթել :

« Դուք կ'ուզէք, կ'ըսէ Պ. Պերթըլօ, պողատու կերպով պատրաստել յասպարէզներու, որոնցմով քաղաքացիք կրնան ապրիլ եւ անկախ կերպով ծառայել իրենց հայրենեաց. շատ լաւ, նախակրթական վարժանաններու նման ըրէք, այսինքն աւելի գործնական եւ աւելի օգտակար գարձուցէք գիւղական վարժարաններու ծրագիրը :

Պէտք չէ մտքէ հանել վերոյիշեալ շրջաբերականը, թէ՛ վարժարանը պէտքէ սահմանափակուի պատրաստելու խելացի արհեստավարժութեան՝ այն արուեստին, որ զինքը պիտի ապրեցնէ եւ պէտք է տայ անոր իր ապագայ զբաղման ճաշակը. առայժմ գոնէ միայն արուեստավարժութեան պատրաստելը բաւական է :

Եթէ երկրագործը դիւզերէ կը փախչի, ըսել է թէ բաւականաչափ չի վաստկիր, եթէ բաւականաչափ չի վաստկիր, ըսել է թէ բաւականին ծանօթութիւններ չունի, որպէսզի հողին արտադրել տայ՝ ըստ կարելւոյն՝ ամենաչափ քանակութեամբ եւ շատ աժանագին : Ուրեմն՝ պէտք է երկրագործական ուսմանց ծանօթութիւնները մտցնել եւ տարածել, այդ է ամենէն գործնական եւ վճռական միջոցը դէպի քաղաքները գաղթելու շարժումը դադրեցնելու համար :

Երկու հաղար ասարի առաջ, խելօք Հոռոմայեցի մը, Գալիմէլ կը զարմանար, որ երկրագործութիւնը չի դասախօսուիր եւ այդ առթիւ կ'ըսէր. « Կը տեսնեմ, որ ամէն տեղ հետաքրքիրու, պարողներու, նուագածուներու համար վարժարաններ կան բացուած. խոհարարները եւ սափրիչները անուն աւ հոչակ կը հանեն, մինչդեռ երկիրը արգասաւորող արուեստին համար բան մը չի կայ, ո՛չ վարպետ, ո՛չ աշակերտ... »

« Եւ սակայն, ոյնտ, հանդերձ, մենք պիտի կորոնցնեն
տնտեսք, որ կ'ուտուցանեն բոլոր այս բաները: Հասարակա-
պետութիւնը զեւ կրնայ զեղեցիկ օրեր ունենալ, վասնզի մեր
նախնիքը, որ երբեք չէին ճանչնար այս ուտու մները եւ նոյն
խի վաստարաններ չունէին, ատոր համար տեւիլ գժրագգ
չեզան, մինչդեռ մարդկային ընդերքի թիւը չի պիտի կրնայ
պէտք չունենալ երկրագործութեան: »

« Փափայեցէք ձեր մասանգութենէն օգուտ քաղել, ձեր
կերպերը բարեփոխեցէ՛ք, դուք չպիտի պատահիք ո՛չ անուշ-
նորդի ոչ ձեզ հասկցող մարդոց. եւ եթէ ես կ'ը գժգո՛ւամ
այս արհամարանքէն, իսկոյն ինձ կը խօսին հողի արդի
անբերբիութեանը եւ մինչեւ անգամ ինձի պիտի ըսեն թէ՛
օդի բարեխառնութիւնը փոխուած է: »

Կեանքի կոուին մէջ յաղթողներ ու երկաթի մարդիք
պատրաստելու համար՝ առողջ ու դրական կրթութիւն տալ
պէտք է մեր տղոց: »

Նոյնխի վարժարանին մէջ, ջնջել թարմ ուզեղնիքէ
աշխատութեան եւ գրագմանց միջեւ գրուած խարտութիւնը,
հասկցնել բոլոր կարելի միջոցներով թէ՛ աշխատութեան եւ
գրագման վարնոցն ու վերնոցը, գոեհիկն ու օգնուականը
չի ըլլար. թէ երկաթագործին, երկրագործին, առեւտրակա-
նին, փորագրչին աշխատութիւնը ո՛չ մի բանով չի տար-
բերի քանանայի, զրագէտի, բժշկի, փաստաբանի, լուծա-
յափոխի եւ աղամանդավաճառի գործէն ու աշխատութենէն: »
Աշխատութիւնն եւ գործը սուրբ են՝ ինչ ձեւի տակ ալ
ըլլան: »

Պէտք է բարեկարգել գիւղական վարժարանները:
Հեղինակել, աշխատարիւրել եւ տպել արուեստագիտական
գործեր ու տարածել գիւղացի հասարակութեան մէջ: »

Այո՛, ամենէն կարուկ եւ գործնական միջոցներով միայն
կարելի է գիւղերէ քաղաքները վաղով գողթականութեանց
տոջեւ պատուար քաշել եւ շարունար պանդխտութիւնը
խապառ ջնջել: »

ԳԱՐԷԴԻՆ ՄԵՇԱՏՈՒՐԵԱՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ՔԻՆԻՆ

Հազիւ երեսուն տարի է, որ Ռուսիոյ մէջ գինեգործութիւնը եւ ալգէմշակութիւնը քարղանալ սկսած են : Երկար ատեն Ֆրանսայի հարաւային զաւառները մատակարարեցին Ռուսաստանի գինին եւ տասնեւհինգ տարիներէ ի վեր գինիի սղառումը բոլոր Ռուսիոյ մէջ տարածուած է . գինեգործական արտադրութիւնը երեք չորս միլիոն հարիւրաւորը կ'անցնի :

Պ. Պոմբառ, Ֆրանսայի զեսպանը միտումի կը թուէ որու սական գինիներու զանազան յատկութիւնները :

« Բըզլարի (Կովկաս) գինին աւելի Պորտոյի կը նմանի, անկէ քիչ մը թանձր ըլլալով հանդերձ, կը պարուռակէ 12-13 աստիճան ալքոոլ, այս տեսակ գինիները ընդհանրապէս բաւական քանակութեամբ այրոջ չեն պարուռակեր Սիբիր կը խտունեն նախ եւ անկէ ետքը կը զրկեն նիժնի նովկորոսի սոնալածառը :

Բըզլարի գինին կը գործածեն նաև ուրիշ գինիներ թեթեւցնելու համար . կը ծախուի շիշը երկրին մէջ ընդհանրապէս 40 սանթիմի . 90էն 1 ֆր 10ի Ռուսիոյ մէջ, ինչ որ կը ներկայանցնէ արդէն բաւական բարձր գին մը :

« Կախէթի (Կովկաս) գինիները Պուրկոնի կարմիր ու ճերմակ գինիներուն կը նմանին . Ռուսիոյ մէջ կը ծախուի ընտիրին շիշը 2 ֆր. 70ի, իսկ հասարակ տեսակի շիշը 1 ֆր. 10ի :

Ս. յս տեսակի գինիները շատ երկար չեն պահուիլ եւ այնքան զլուխ զարնող են, որ նրբիմէն Բեդերսպուրկ զրկուելիք թեթեւ գինիներուն շատ լաւ կրնան խառնուիլ :

Նրբի մէջ գինիի արտադրութիւնը աւելի հին է . կը շինուին օտար որթատունկերու բերքովը :

Շապաթ գինիները երկրին մէջ հաստատուած գուրջերական գաղթականութեան մը ձեռքովը կը պատրաստուին . այս գինին կը նմանի Պոտըլէի գինիներուն :

Լիվատիայի գինիները, որոնք Ռուսիոյ մէկ մասին մէջ կը ծախուին՝ կ'արժեն 1 ֆր. 60 — 5 ֆր. 35ի շիշը, նայելով ընտիրութեանը :

Տօնի նաճանգը կ'արտադրէ փոքրացող գինիներ, որոնց շիշը տեղւոյն վրայ կը վաճառուի 2 ֆր. — 2 ֆր. 15ի : Գալով Նրբի արքունի կալուածներուն արտադրած գինիին, շիշը կը ծխուի մինչև 5 ֆր. 35ի : Արդարև ասիկայ է միայն Ռուսիոյ ճշմարիտ եւ ամենաազնիւ գինին :

Պետական կալուածներու վարչութիւնը իրիմի մէջ ունի լաւ դիրքով բնագործակ հողեր, որոնք ել կրին մէջ պատրաստուած գինիներու ամենաբնօր ստեղծները կ'արտագրեն :

Ասոնք կը ծախուին 20-30 0/0 աւելի բարձր գնով եւ այս գինիներու շիշերուն վրայ գրուած է կասավարութեան գինանշանը :»

Քանի մը տարիներէ ի վեր Քսերեսի Մատէրի Բողոքի եւ Շամբայի տեսակ գինիները կը պատրաստեն :

Թէեւ բարձր ընկերութիւնը եւ ազնուականութիւնը, որոնք գրեթէ միակ սպառողներն են, կը գերընտրեն զեռ ֆրանսական գինիները, սակայն ուսական մաքսատուց ծանրութիւնը, տեղական գինիներու սպառելուն մեծապէս նպաստեց այս վերջին տարիները :

1898ին, Ֆրանսա ներմուծած է Ռուսիա 22880 կենդինար,

— 99ին, 24,320 կենդինար.

1900ին, 19,840 —

— 1ին, 4րեթիկ նոյնքան

— 2ին, 21,920 կենդինար

— 3ին, 21,440 — 11 ամսուան մէջ :

Ռուսիա մտած գինիներու 65 տոկարիւրը Ֆրանսան կը ներմուծէ :

Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Պ Տ Ո Ի Ղ Ն Ե Ր

Ամենէն շատ ծաղիկի ունեցող ծառերը չեն, որ ամենէն գեղեցիկ պտուղները կուտան :

Կը պատահին տարիներ, որ ծառերը ծաղիկ չըջանին աննըչմարելի թւով ծաղիկներ կը թափեն գետին. լաւ նշան մը պէտք չէ նկատել այս պարագան. ծառերը շատ ծանրաբեռնուած ըլլալով պտուղները բաւականին չպիտի կրնան խոշորնալ, այնպէս որ չիպիտի կրնան ըլլալ ամենագեղեցիկ պտուղներ :

Այն ծառերը որոնցմէ կ'ակնկալուի սեղանի զարդ եւ բերնկամ պտուղներ, պէտք է անոնց վրայ մասնաւոր ուշադրութիւն դարձնել, պէտք է ցանցառցնել ծաղիկները աւելի գեղեցիկ եւ լաւագոյն պտուղներ քաղելու համար : Եթէ ծառի պտուղներուն թիւը չափազանց շատ ըլլայ, արդիւնքը կըլլայ նախ մեծութեան, գեղեցկութեան, գոյնի եւ հաշակի ստեղծելուով միջակ պտուղներ, երկրորդ՝ ծառը մե-

աժամանակ չի կրնար հասնիլ իր պտուղները եւ յառաջիկայ
աարուայ պտուղի բերքն ապահովող կոծիծները սնուցանել :

Գ ուղներու թիւը պահպանելը կորուստ մը չէ, քանի
որ մնացեալները աւելի ընտիր ու գեղեցիկ կ'ըլլան . թիւի
պահպանելովը անոր բերքի արժէքը կ'ըրարնարցուի :

Երբ ծառեր շատ պտուղ կը բունեն, անբրիւզ պէտք է
պահպանել անոնց թիւը եւ այնքան թողուլ, որ չի յոգ-
նեցնեն եւ չտկարացնեն ծառը :

Շանցառելու գործողութիւնը պէտք է սկսիլ նախ ծի-
րանի, պարկուկի ծառերէն՝ երբ գեռ կուտը կ'արժացած չէ :
Խտակ պտուղները ազի կամ Գոսցախի մէջ զննելով կ'արեւի
է պատրաստել թիւներ (թուրշու) :

Միրանէն վերջը գեղձի ծառերը կ'արեւի է ցանցառել
վերոյիշեալ կերպով ու այնուհետեւ տանձներէն որ սխը-
նորներէն թողով տկար եւ միջակ ճիւղերու փնջերուն
վրայ մէկ երկուք եւ ուժեղ ճիւղերու ուտերուն վրայ երկու
երեք պտուղ :

Շանցառելու միջոցին կ'արելու է անուներն ու վնա-
տուածները՝ պահելով ամենէն գեղեցիկները : Փրթցուելիք
պտուղներու կոթր փակած կէտէն հետո կ'արելու է եւ պու-
շութեամբ, որպէսզի մնալիքները չիվնասուին . կ'արելը սա
առաւելութիւնը ունի որ զոյացած վէրքը չուտով կ'ըլլաւ-
նայ :

Գեղեցիկ պտուղներ ստանալու համար գեռ ուրիշ զգու-
շութիւններ ալ կան :

Կեռտաները, դեղձերը, տանձի քանի մը տեսակները պէտք
է հասուննալէ քիչ մ'առաջ ենթարկել արեգակուն ճառա-
գայթներուն, որպէսզի գեղեցիկապէս գունաւորուին, համար-
նին ուժովնայ եւ հոտերնին նրբանայ :

Շուքը պտուղներու անումին կը նպաստէ, պէտք չէ ու-
րեմն աւելի կանուխ արեւել . զանոնք արեւելու ամենէն
յարմար ժամանակն է երբ պտուղներու մաշկը կը փայլի,
որ ցոյց կուտայ հասուննալու մտ ըլլալնին :

Ի՞նչ ժամանակ պտուղները աստիճանաբար շուքէն կը
հանուին՝ մէկ օրը քանի մը տերեւ կ'արելով, յաջորդ օրը
զարձեալ մի քանի տերեւ ջնջելով եւ յաջորդաբար ութէն
ասոր օր . պէտք չէ մէկ անգամէն արեւել, այլ ասիաւ առ
տակաւ վարժեցնել արեւի լոյսին եւ ջերմութեան ազդե-
ցութեամբ, որպէսզի չի վնասուին պտուղները :

Տերեւները պէտք չէ քաղել, այլ կոթի փակած տեղէն՝
վերով կ'արել . կ'արելի է նաեւ տերեւի այն մասը միայն
կ'արել որ պտուղին շուք կ'ընէ :

Տերեւները, պաշտօն օւնին, իրենց անութին տակ պահուած կոծիծներուն պէտք եղած հիւզք պատրաստել . այնպէս որ, եթէ ուշադրութեամբ չկարօին տերեւները եւ քաղուին, կրնան կոծիծները վնասուիլ ու չի գարգանալ :

Որպէսզի պտուղները յաջորդաբար հասունանան, պէտք է մէկ օրուան մէջ կտրել տերեւները, եթէ ոչ ամենքը միատամանակ կը հասունանան՝ ինչ որ վնաս է թէ՛ շահու թէ՛ վայելքի տեսակէտով :

Պտուղները ազնուացնելու նոր միջոց մ'ալ կայ, թէեւ քիչ ճանչցուած է . այդ պարկելն է . այս գործողութիւնը կը կայանայ պտուղները թուղթէ պարկերու մէջ ածնել՝ պաշտպանելու համար զանազան վնասակար միջատներու եւ զանազան սնկային կիւանդութեանց դէմ, մտերնին համեզքներու եւ կեղեւնին փափկացնելու, պտուղներու ծաւալը մեծցնելու եւ վերջապէս գարնան անոնց գունաւորումը փութացնելու համար :

Արդարեւ պարկելով միայն կտրելի կ'ըլլայ առաջին կարգի տանձեր ու ինձորներ ստանալ, միւս հասարակ պտուղներէն տարբեր՝ իրենց փափկութեամբ, նրբութեամբ եւ նաչակով :

Մէկ խօսքով՝ պարկուածները կ'ըլլան առաջին կարգի պտուղներ :

Փոքրիկ փորձ մը բուսական է կամոզել եւ զեղծցիկ արգիւնք մը ձեռք բերելու համար :

ՔԱՂՈՑԻ ԱՌՈՂՁԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ

Քաղոցը տարուան ամենէն տաք ժամանակը կ'ընայ, երկրագործի, ինչպէս իր կենդանիներու աշխատութիւնը այս ամիսներուն, շատ ծանր եւ տաժանելի է:

Առողջապահական գլխաւոր կանոնները պէտք է գիտնայ երկիրը մշակող որպէսզի թէ՛ իր թէ՛ իր օգնական կենդանիներու առողջութեանը կրնայ հոգ տանիլ:

ԻՇՏԱԿԻ ԱՌՈՂՁՈՒԹԻՒՆԸ. — Ուղղակի կամ անուղղակի կերպով քաղոցի ժամանակ, հողի մշակի հիւանդութեան զլխաւոր պատճառներն երեք են.

1. Յոգնութիւնը, 2. գէշ անդառութիւնը, եւ 3. արեգակի բարկութիւնը:

1 Յոգնութիւնը. — Սաստիկ տաքերու ժամանակ մտնալանդ, մշակը անխոչմութիւններ կը դործէ որոյ ենթակայ կ'ըլլայ զանազան հիւանդութեանց:

Չափազանց աշխատութեան եւ քրտնելու հետեւանքը կ'ըլլայ պապակիչ ծարաւը. մշակի մկանունքները կը թուլան եւ կը ստիպուի հանգստանայ:

Անխոչեմ աշխատաւորը այն ասին փոխանակ վայրկեան մը պտակելու հանգստանալու, չոր եւ շուք տեղ մը խուրձի մը վրայ, հանդիպած տեղը կ'երկննայ, արեւին տակ, առանց մտածելու որ կրնայ արեւահար ըլլալ խոնաւ մարդի մը կամ գետնի մը վրայ, մոռնալով որ կրնայ ջերմ եւ յոգացաւեր ստանալ, նոր քաղուած խոտերու վրայ ուր կրնայ գլխացաւեր առնել, մինչեւ անշամ խղտամահ ըլլալ: Վերջապէս այնպիսի տեղեր՝ առանց մտածելու որ կրնայ խայթուիլ թունաւոր միջատներէ ճանճերէ եւ օձերէ:

Այս անհոգութենէն առաջ եկած շարիքները զիտնալով, անոր դարմանները կը փնտռուի. թունաւոր խայթուածքները դարմանելու համար (տես «Գութան» Բ. տարի թիւ 11-12) պէտք է ճեղքել վէրքը եւ ուժով ձեռել ու յետոյ այրել անուշադրով:

Չարաչար յօգնութեան առաջըր աննիւու համար, կարելի է օրուան աշխատութիւնը շորս մասի քաժնել :

Կէսօրէն առաջ՝ աշխատիլ երկու անդամ, չորսական ժամ, կէս ժամերու հանգիստով :

Կէսօրէն երեք ժամ վերջը սկսիլ, մինչև. արեւի մուտքը, դարձեալ կէս ժամերու հանգիստով :

Այս եղանակով մշակը տասերկու ժամ պիտի կրնայ աշխատիլ, առանց ենթարկուելու սաստիկ տաքերու վտանգաւոր ազդեցութեանը, որոնք տեղի կ'աւնենան ընդհանրապէս կէս օրէն վերջը՝ երեք ժամ :

Եթէր ժամու կազդուրիչ քունը կը տրուի մշակին ինչ օր արդէն բաւական է :

2. Վատ սնունդը. — Եթէ յօգնութիւնը կրնայ հիւանդութիւններ պատճառել, վատ սնունդն ալ մեծ շափով կը նպաստէ ատոր. արդարեւ եթէ շարունակ աշխատութեան եւ առատ քրտինքներու պատճառած կորուստի սեղը առատօրէն չի դրուի, ուժասպասութիւնը երեւան կ'ելնէ :

Մշակը ընդհանրապէս շատ գէշ կը սնուցուի, եւ անսընունդ կերակուրներով. ընդհակառակը շատ կը խմէ՝ ըլլայ ջուր, ըլլան ուրիշ վտանգաւոր ըմպելիքներ :

Ընդհակառակն պէտք է շատ ուտէ օւ քիչ խմէ, մասնաւորաբար հաւկիթ, պանիր կարագ, ճարպիղէն եւ մանուսնիկ հաց :

Գալով ըմպելիքի քացախոս ջուր եւ շատ թիթեւ սուրճ :

Սուրճով պատրաստած ըմպելիքը, հաճելի եւ անողջարար է, կը կազդուրէ մկանուները, քրտինքը կը շափուորէ, ջրային գրութիւնը քիչ մը կը գրգռէ, որով մարմինը կրնայ տանիլ մեծ յօգնութիւնները :

Ումպ ումպ խմելով սուրճով պատրաստուած ջուրէն մարդ աւելի կը զո՞վանայ :

3. Արեւի տօթը. — Երկրագործի եւ թշակի հիւանդութեանց ամենազիտաւոր պատճառը, արեգակի բարկ ճառագայթներն են : Ընդհանրապէս մարդիկ շատ քիչ զգուշութիւններ ձեռք կ'առնեն արեւին գէմ : Դաշտի դորձաւորները արեւին աթոռը նստած (սաստիկ արեւի մէջ) զլուխնին, ծածրակնին, կուրծքերնին եւ թեւերնին բաց, կ'աշխատին

վայրկեան մ'իսկ չկասկածելով, որ կրնան քրեւահար դառնալ . կրնան ստանալ ա՛ն՝ակ մ'օճացաւ (Կրլանճըք), որը թէև շատ վտանգաւոր չէ, բայց կրնայ մղնքատապ եւ արիւնակոյտ առաջ բերել, եթէ քիչ մը ըմպելիք խմած ըլլան :

Լատագոյն խորհուրդը, որ կրնայ տրուիլ երկրագործին սաստիկ տաքերու ժամանակ, կազմել լայն շապիկ եւ անդրավարտիք, կոճկել թեւերն ու օձիքը, իսկ ծոծրակը ծածկել թեթեւ կտաւով մը :

Կանանչ գոյնը ամենէն լաւ կը դիմադրէ արեւի ճառագայթներու ազդեցութեան դէմ, հետեւաբար աշխատութեան զգեստներու համար կարելի է ընտրել կտանանչ գոյնը :

Մ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ն Ա Ր Յ Ը

Կաթնային թթուն եւ աղիքային խմորումները — Արեւելքի մէջ շատ տարածուած կերակուր մը — Գուլկարական թթու կաթը — Ինչպէս պէտք է առնել զայն :

Յօդուածը զոր վերջէրս հրատարակեցինք պ . Մէլչնիքովի ճիգերուն վրայ, ծերութեան առաջին աստիճան համար, մեր ընթերցողները բուռն կերպով հետաքրքրեց : Ամէն կողմերէ մեզ բաղմաթիւ նամակներ հասած են, մենէ աւելի ընդարձակ տեղեկութիւններ կ'ուզեն :

Գիտնական բրօքէսէտտի գոված մածնած կաթը, ամէն տեղ կարելի չէ գտնել . կը պատրաստուի խմորիչով մը, որ կը գտնուի միայն պուլկարական ծագում ունեցող թթուած կաթերու մէջ, որ կաթնաթթուի ամենագորաւոր արտադրողներէն մէկն է . առիկա դիւրամարտ սնունդ մ'է, ծերութեան դէմ դարման մը կարելի չէ նկատել զայն, բայց պարզապէս նուազեցնող միջոց մը մեր աղիքային բուսանունն : Վտանգաւոր մեքրոսիներով այնքան հարուստ, եւ այսպիսով արգիլել, կարելի եղած չափով, մեր գործարանաւորութեան (օրգանիզմի) շարունակական փտութիւնը :

Թթուած լաւագոյն ըմպելիքը այն է, որ ստացուած է պաղ կաթով, կանխաւ եռացուած, սերը առնուած եւ որուն խառնուած է պալքանեան թերակղզիէն եկած ճպուլկարական խոշոր ցպիկներու զուտ մշակութիւններ :

Յանուար և յս կաթը պէտք է պահուի 20-25 աստիճան տաքութեան մէջ, ուր պիտի կազմէ մածրոտային կոյտ մը .

Ինչ մը թթու հաճելի համով մը, որ՝ փափկօճաշակները կրնան անուշցնել փոշի շաքարի կամ կասիի (տարչին) խտունորդով, օրուան ամէն ժամերուն կարելի է ուտել . օգտակար է օրական՝ առաւօտ եւ երեկոյ՝ 3-400 կրամնոց մէկ երկու աման սպառել :

Սննդական մեծ յատկութիւններով օժտուած սնունդ մը ամենահին ժամանակներէ ի վեր կը գործածուի Արեւելքի մէջ, միայն այս վերջին տարիներս մեքրոպարանական ու սուսնասիրութեան ենթարկուած է :

Մածնած այս կաթը նպաստաւոր ներգործութիւն մ'ունի վերջապէս ստամոքսի դժուարահալութիւն, յօղատապութիւն, երիկամատապ ունեցողներու վիճակին վրայ :

Ուրեմի, ընթերցողներ որ կ'ուզեք ծերանալ, հայթայթեցէք պուլկարական թթու կաթը : «Էլ Մաթէն»

Պալքանեան թերակղզիին վրայ միայն Պուլկարներ չեն բնակիր այլեւ Րումէներ որոնք ոչնչուապ երկրագործ ժողովուրդ մ'են քան Պուլկարները : Եթէ պուլկար ծագում ունենար մածունը Րումէները թրիմէն գաղթող Հայերէն չի պիտի սովորէին մածուն չինելը եւ «մածուն» բառը հայերէն չի պիտի փոխ առնէին :

Փ Շ Ր Ա Ն Ք Ն Ե Ր

Հաւնոցի առողջարանութիւնը . — Հաւերն ալ հիթակա-
նն շատ հիւանդութիւններու, յաճախ անոնց թաթերը կը
հիւանդանան . հետեւեալ հին դարմանը լաւագոյն արդիւնքը
կուտայ :

Չոր տեղի մը մէջ գնել հետեւեալ նիւթերէ պատրաստուած
փոշին .

մարած կեր 2 քիւօ

փայտի մոխիւր 7 քիւօ

ծծումբի փոշի 1 քիւօ

հաւերը կուգան տապալակիլ փոշիին մէջ եւ կը չորցնեն
իրենց թաթիկները . այս խառնուրդը, բլլաւով ազկաղեան
որդերը եւ ոջիւններ շուտով կը սատկին :

— Ինչպէս կարելի է ճանչնալ հաւերու տարիքը եւ անոնց
մաք լաւութիւնը . — Հաւերու տարիքը կարելի չէ տեղա-
ներէն ճանչնալ . թոչուններու տարիքը վերիվերոյ կը գիտ-
ցուի անոնց թեւերուն ներքեւ, կողերուն վրայ գտնուած
փետուրներէն :

Վառահիւներու փետուրներու միջեւ գտնուած անոտափե-
տուրները երկար, թեթեւ եւ նուրբ կ'ըլլան :

Մորթի հիւսուածքը նուրբ վարդագոյն է եւ աղին ան գին
կը անհետուին փոքրիկ կապոյտ երակներ . թաթիկներու
ողորկութիւնը եւ անոր թեփերու նրբութիւնն ու փայլու-
նութիւնը մաաղաչութեան նշաններ են :

— Հօկայ ծառեր . — Տրանսայի մէջ Լըվիէ անունով ան-
տառ մը կայ, որուն մէջ կը գտնուի եղեւին մը 210 տարե-
կան եւ 50 մէթր բարձրութեամբ : Այս ծառը կը կոչուէր
նախագահ, կտրուելով տուած է 30 մէթր խորանարդ վառ-
լափայտ . թեզօշի 220 տարեկան ծառ մ'ալ կը գտնուի Ժուի
անտառներուն մէջ գրեթէ նախագահ եղեւնիին բարձրու-
թեամբ :

Սենեկալի մէջ, երբ մեծ վարազաճատեր (պաօպապ) կը
կտրեն, անխորժ անակնկալներու կը հանդիպին, անոնցմէ
սմանք իրենց բունին մէջ կ'ուսնենան մոմիացած սեւամորթ

մարդու մը մարմինը, Երկրի սովորութիւնն է վարազածափ
բունին մէջ թաղել, զերեւմանի արժանի չի տեսնուած
մարդիկը :

Պատգամս պի փայտը շատ կակուղ է եւ կարելի է առանց
վնասելու ծափ կեանքին՝ փորել : այսպէս սեւամորթերը
անոր մէջ ծակեր կը բանան, զիտկը կը ջանդեն, կը փակեն
ծակը : թիւ վերջը գրեթէ վերջին հետքը չի տեսնուիր :

— Գարիինոր հիւանդութիւն մը . — Անցեալ տարի տեսնուած
է Ֆրանսայի Նօթ կասօնս եփարտումանին մէջ այս նոր
հիւանդութիւնը . արմախքը վարդացման զանազան շրջան-
ներուն մէջ, բուսնելէ կը գաղրի : հիւանդ տերեւները կը
ճանչցուն խարտեաչ գիծերով, որոնք կ'ըլլան 1—6 հազ .
մէթր լայնքով եւ 1—10 հազ . մէթր երկայնքով : յետոյ
տերեւները կը ճեղքուին եւ կ'ուրորին :

Այս հիւանդութեան պատճառը սուսկ մ'է, որ կապրի
սերմերուն վրայ, զայն ջնջելու համար պէտք է սերմերը
թաթիկէ երկու առ հարիւր պույր պորտլէչի մէջ :

Այս հիւանդութիւնը վերոյիշեալ տեղաբերմանի հուձքը
50 առ հարիւր պահեստուցած է :

Պույր պորտլէչի պատաստութիւնը մանրամասնօրէն
գրուած է (տես «Իտալիան») Ա. տարի, թիւ 3 էջ 51, Մղեղակ-
ներ :

— Դեկտ. 29 թիւով Ատանայէն կը գրեն խմբագրութեանս
որ զաշատուկերը մեծ վնասներ կը գործեն այդ արգիւնա-
բեր եւ հուրզի երկրի երկրագործութեան : Նմբագրութիւնս,
ինչպէս միշտ, այնպէս ալ այս անգամ, պիտի փութայ ծա-
նուցանել ամենէն ազգու գեղերն ու գարմանները, այս
պատուհանը ընտրինջ ընելու համար :

Մեր հայրենակիցները, առանց քաշուելու, այսպիսի պա-
րագաններու մէջ կրնան մեզի գիծել :

— Ի չիշատակ Սարան պէյնուպարի «Գուլթան» ի խմբագրութիւնը յսան օրինակ «Գուլթան» յատկացուցած է զաւտական ազգ. գիւղական վարժարաններու :

— Յայտնի բարեգործ մը կը նուիրէ տառ օրինակ «Գուլթան» կովկասի եւ Ճաճկաստանի գ. շրջան — Խորագրութիւնն որոշեց ուղարկել մէկ մէկ օրինակ Տեղուեայ գիւղերու վարժարաններու հասցէին — Կովկաս՝ Վաչեան, Շուրաբէր, Օշահան, Արմուրիք. — Ճաճկաստան՝ Գոմա, Խալու, Նոնջաբու, Մարդուան, Փրինկեան եւ մէկ օրինակ բարերարին :

— Ի մտոյ լոյս կը աւանայ «Գուլթան» ի հրատարակութեանց՝ Ա. հատորը ՇՆՄՄԸ զինն է 1 ֆրանք 50 սանթ.

— Վերջապէս «Գուլթան» ի խմբագրութիւնը բարեբախտութիւնը կ'ունենայ ծանուցանելու իր ընթերցողներուն, բարեկամներուն եւ բաժանորդներուն որ 1905 ի շրջանի հրատարակութիւնը ամբողջովին ազատված է : Հակառակ «Գուլթան» ի անկանոն հրատարակութեան ոչինչ չենք պարտիր մեր բաժանորդներուն : Նոր շրջանին փոխանակ տասնրկու թիւի՝ տասնուչորս թիւ պիտի տանք, ճիշդ այդ պատճառով ներկայ համար կը սկսի 33րդ էջէն :

«Գուլթան» ի բաժանորդագրութիւնը առանձինն միշտ նոյնն է. անոր որ կ'ուզեն միաժամանակ «Գուլթան» ի հրատարակութեանց (Մատենադարան) ալ բաժանորդ գրուիլ, պէտք է ուղարկեն քսան ֆրանք կամ տասր լուպլի :

K. MÉDZADOURIAN
53. RUE BOULARD,
PARIS.